ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«30» հունվարի 2017 թվականի № 13-Ա

«ԿԱՐԵՆ-77» ՍՊԸ-Ի ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՀԱՎԱՍՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով՝ ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2016 թվականի փետրվարի 29-ի տրված պետական գրանցման վկայականի թիվ 008 ներդիրը ընկերության անվանափոխման մասին, «ԿԱՐԵՆ-77» ՍՊԸ-ի փոփոխված կանոնադրությունը և ընկերության 2017 թվականի հունվարի 25-ի թիվ 005 գրությունը՝

Հրամայում եմ

1. Ընդունել ի գիտություն, որ «ԿԱՐԵՆ-77» ՍՊ ընկերությունը անվանափոխվել է՝ «ԿՐԻՎՈՅՇԻՆ» ՍՊ ընկերության:
2. Աշխատակազմի Ընդերքի տրամադրման գործակալության պետին՝
1) ապահովել «ԿԱՐԵՆ-77» ՍՊ ընկերության ընդերքօգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերում համապատասխան փոփոխությունների կատարումը.
2) ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:
3. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ ընդերքի տրամադրման գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:
4. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով կամ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելուց հետո 2-ամսյա ժամկետում:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ